# Հայ գրականության օլիմպիադայի հանրապետական փուլի հարցաշարերի

## պատասխաններ

## X դասարան

1. Դիցաբանությունը առասպելների միջոցով մեզ հասած աստվածների ընտանիքների պատմությունն է՝ շաղախված երևակայական, հեքիաթային մտածողությամբ: Յուրաքանչյուր ժողովրդի դիցարանը արտահայտում է այդ ժողովրդի հավատալիքներն ու կենցաղը, երևակայությունն ու փիլիսոփայությունը: Հայոց դիցարանը աշխարհի հնագույն դիցարաններից է, որը մեզ ծանոթացնում է հայկական հեթանոսական աստվածների ընտանիքին, մեր ժողովրդի հավատալիքներին , պաշտամունքին, արարչագործության հանճարին: Հայոց դիցարանի գերագույն աստվածը Արամազդն է. որը համարվել է Ժամանակի որդին, Երկնքի ու Երկրի, մյուս աստվածների արարիչն ուտիրակալը: Նա կայծակնացայտ է, ինչպես հունական Զևսը, լուսատու, ինչպես հռոմեական Յուպիտերը: Արամազդի անունը համապատասխանում է իրանական Ահուրամազդին, սակայն չի նույնանում նրա հետ, քանի որ մեր դիցարանում չկա նրա հակոտնյան՝ չարի աստվածը: Արամազդը իր որդիների հետ բնակվել է Արարատի գագաթին, ինչպես հունական աստվածները՝ Պառնասում: Արամազդին նվիրված տաճարները շատ են, սակայն գլխավոր տաճարը կառուցված է եղել Եփրատի ափին՝ Դարարանաղյաց գավառի Անի ամրոցում, որտեղ գտնվում էին նաև հայոց թագավորների դամբարանները: Արամազդին նվիրված տոնը կատարվում էր Ամանորին , երբ տեղի էին ունենում նավասարդյան խաղերը: Արամազդ է կոչվել հայոց հեթանոսական տոմարի 15-րդ օրը: Նրան զոհաբերում էին սպիտակաթույր կենդանիներ՝ ցուլ, նոխազ, ձի, ջորի: Արամազդի դուստրն էր Անահիտը՝ հայոց ամենասիրված աստվածուհին, որին անվանել են«սնուցող մայր»,«ոսկեմայր», «ոսկեծղի»,«ոսկեհատ» և այլն: Անահիտը համարվել է պտղաբերության, արգասավորության, ծննդաբերության, առավել վաղ շրջանում՝ նաև ռազմի աստվածուհի: Այս մասին վկայել է նաև Ստրաբոնը իր՝ Հայաստանին նվիրված աշխատությունում: Անահիտը նույնացվում է հունական Արտեմիսի և հռոմեական Դիանայի հետ: Հետագայում դարձել է հայոց գերագույն աստվածուհին՝ մայրության, պտղաբերության: Համարվել է Արտաշատ մայրաքաղաքի հովանավորը: Նրա անունով կառուցվել են բազում տաճարներ, անվանակոչվել բնակավայրեր, կանգնեցվել ոսկեձույլ արձաններ: Գլխավոր տաճարը եղել է Եկեղյաց(նաև Անահտական) գավառի Երիզա ավանում: Անահիտի մեհյաններ կային նաև Արտաշատում, Արմավիրում, Աշտիշատում, Բագարանում և այլուր: Նավասարդի սկզբին նշվում էր Անահիտին նվիրված տոնակատարությունը, զոհաբերվում էին ճերմակաթույր ցուլեր, երգում էին, աղոթում՝ նվիրաբերելով առաջին բերքը: Հեթանոսական տոմարի 19-րդ օրը կոչվում էր նրա անունով: 19-րդ դարավերջին Երզնկայի շրջանում հայտնաբերվել է Անահիտի պղնձաձույլ գլուխը,

որը պահվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում: Իսկ ոսկեձույլ արձանը ջարդել ու իրար մեջ բաժանել եմ հռոմեական զինվորները մ.թ.ա. 34 թվականին: Մյուս սիրված աստվածը Վահագնն է, որի անվան ստուգաբանությունը կապվում է հին պարթևական «Վահ»՝ աստված և հին հնդկական« Ագնե»՝ կրակ անվանումների հետ: Վահագնի իրանական զուգահեռն ու նախատիպը համարվել է Վերեթրանգան: Հայոց դիցարանում Վահագնը համարվում է քաջության, ուժի, հերոսության, ռազմի աստված և միավորում է բնության չորս տարրերը՝ օդը, ջուրը, հողը, կրակը: Ըստ առասպելի՝ նա հարդ էգողանում ասորական Բարշամ աստծուց, որը, սակայն, ճանապարհին թափվել է և առաջացել է Հարդագողի ճանապարհը, Ծիր կաթինը, վերջինս կապվում է հունական աստվածուհի Հերայի կրծքից թափվող կաթի հետ: Մեզ է հասել «Վահագնի ծնունդը» հրաշք առասպելը, որը հավաստում է նրա՝ բնության 4 տարրերից ծնված լինելը: Վահագնի տաճարը ՝ Վահեվահյան կոչված, գտնվել է Տարոնի Աշտիշատ գավառում, որտեղ հանդիպել են գեղեցկության ու սիրո աստվածուհի Աստղիկն ու Վահագնը. Աստղիկի մեհյանը Աշտիշատում կոչվել է «Մենյակ Վահագնի»: Վահագնը համարժեք է հունական Արեսին, սակայն նրան հետագայում նույնացրել են հեփեստոսի հետ՝ երևի կրակի հետ կապված: Նրա անունով կոչվում է հայոց տոմարի 21-րդ օրը՝ գարնանային գիշերահավասարի օրը: Աստղիկին նվիրված տաճար- մեհյանները գտնվում էին Աշտիշատում, Վանի մոտ՝ Արտամետում: Աստղիկը նույնացվել է հունական Աֆրոդիտեի և ասորական Աստարդիտեի հետ: Աստղիկին անվանել են «Ոսկեծղի», «Վարդամատն». նրան նվիրված տոնը կոչվում էր Վարդավառ և նշվում էր նավասարդի(հուլիսի)կեսին. մարդիկ կարմիր վարդերով էին պատում տաճարներն ու ճանապարհները, ջուր էն ցողում միմյանց վրա. այդ պատճառով էլ նրան նաև նույնացրել են ջրի աստվածուհու հետ: Նրա լոգարանը գտնվում էր Արածանիում. հայոց կտրիճներից իր խենթացնող գեղեցկությունը ծածկելու համար ամբողջ շրջակայքը պատել է մշուշով, ինչից էլ, ըստ ավանդության, առաջացել է Մուշ երկրի անունը:
Տիրը հայոց դիցարանի ամենասիրված աստվածներից է. սկզբում եղել է Արևի պաշտամունքի հետ կապված աստվածություն, սակայն հետագայում իր տեղը զիջել է Միհրին, իսկ ինքը դարձել է աստվածների հոր՝ Արամազդի քարտուղարը՝ դպիրը, գրի, գրականության, գիտության ու արվեստի հովանավորը, նույնացվել է հունական Ապոլլոնի և Զևսի սուրհանդակ Հերմեսի հետ: Առանջին դեպքերում նույնացվել է Արա Գեղեցիկի հետ, նա եղել է երազների մեկնիչ՝ երազացույց- երազահան:Տիրի մեհյանը կառուցված է եղել Արտաշատից ոչ հեռու՝ ճանապարհի եզրին՝«Երազամույն» կոչվող վայրում: Նրա անունով է կոչվել հին տոմարի Տրե ամիսը: Տիրի անունից առաջացել են Տրդատ, Տիրիթ, Տիրան անունները:
Միհրը լույսի և բարու հնդկա-իրանական հին աստվածություն է. հետագայում՝ արևի աստվածություն, որը գործել է մի շարք սխրանքներ. մենամարտել է արևի հետ, մարտն ավարտվել է հաշտությամբ: Նա ծնվել է ժայռից, նրան խնամել են հովիվները: Միհրը մենամարտել է Որմիզդի ստեղծած առաջին արարածի՝ ցուլի հետ, մորթել նրան ոսկե սրով և զոհաբերել: Անասունի արյունից առաջացել են բոլոր օգտակար

բույսերը։ Այնուհետև համբարձվել է երկինք և այնտեղից հովանավորել մարդկանց։ Նրան նվիրված տաճարը գտնվել է Դերջան գավառի Բագահառիճ գյուղում։ Հայոց էպոսում հիշատակվում են արևի աստված Միհրը և ջրերի աստվածուհի Ծովինարը, ով, հղիանալով ջրից, ծնում է հայոց անպարտելի դյուցազուններին, որոնք զորեղանում էին ջրից։ Հայոց դիցարանում Ծովինարը ջրի, ծովի, անձրևի աստվածուհին է, ամպրոպային ոգի, որ կարող է աղետաբեր կարկուտ թափել կամ կենարար անձրև պարգևել։ Մնացյալը՝ մասնակիցը։

2. Եղիշեն՝ **Ավարայրի երգիչը, պլպուլն Ավարայրի**, Մեսրոպ Մաշտոցի աշակերտը, ապրել և ստեղծագործել է 5-րդ դարում։ Ըստ իր իսկ թողած տեղեկությունների՝ ծնված պիտի լինի 410-415 թվականների միջակայքում։ Ուսանել է արտասահմանում,իսկ ուսումն ավարտելուց հետո եղել է Վարդան Մամիկոնյանի, հավանաբար նաև ամբողջ Մամիկոնյան տան, քարտուղարը։ Նա հայտնի է իր «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» մատյանով, որ գրել է հավանաբար Ավարայրի ճակատամարտից անմիջապես հետո, Մամիկոնյան Դավիթ երեցի պատվերով։ Որ Եղիշեն եղել է Ավարայրի մասնակիցը, փաստում է հենց ինքը իր պատմության մեջ։ Նա ստույգ նշում է իր երկը գրել- ավարտելու տարեթվերը, հիշատակում է Ավարայրի հերոսներին,իր մեկենասին նա գրում է.«Արդ, որովհետև քո աննախանձ բարք ու բնությունից պատվեր ու հրաման ստացանք, սկսենք, որտեղից արժան է սկսել, թեպետև չէինք հոժարի մեր ազգի թշվառությունը ողբալ։ Ահա մեր կամքի հակառակ արտասվալից ողբով շարադրում ենք այն բազմաթիվ հարվածները, որոնց մեջ հենց մենք էլ ընկանք՝ ականատես լինելով»։ Նա եղել է Միհրներսեհի էղթին մերժողական պատասխան գրող 18 եպիսկոպոսների մեջ։ Լինելովանմնացորդ հավատացյալ՝ կյանքի վերջին տարիները նվիրել է ճգնակեցության նախ՝ մոկաց աշխարհում, ապա Ռշտունիքում։ Ռշտունիում էլ մահացել է 470-475 թվականների միջակայքում։ Եղիշեն նկարագրել է բազմաթիվ հերոսների, զինյալ հայ ժողովրդին, քահանայից դասին, բայց ամենաակնառու հերոսները երեքն են՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանը, հայոց քերկուսինահանայպետ Հովսեփ Վայոցձորեցին, մարզպան Վասակ Սյունին։ Առաջին երկուսին Եղիշեն ներկայացնում է հայրենասերի ու սուրբ նահատակի լուսապսակով, իսկ Վասակին ՝ դավաճանի ու անիծյալի։Նրամասին Եղիշեն խոսում է անթաքույց չարությամբ՝ ասելով.« Եվ այսպես Վասակը շարժվեց ու շփոթեց Հայոց աշխարհը» , իսկ քաջ Վարդանն իր շուրջը համախմբում է հայոց զորքը, 23 նախարարների, ավելացրած նաև մի քանի տոհմերի, իր եղբայրներ Համազասպին ու Հմայակին, հավաքվում են նաև հոգևորականներ, քանզի դա ոչ միայն ուժի կռիվ էր, այլ հուգու։ Այնտեղ անօրինակ քաջությամբ էին կռվում ղևոնդյանները՝ Ղևոնդ երեցի գլխավորությամբ։ Պատերազմից առաջՎարդանը սրտառուչ և իմաստուն խոսքով դիմում է իր քաջ նիզակակիցներին. «Արդ, աղաչում եմ ձեզ, ով իմ քաջ նիզակակիցներ……չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ոչ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք……Վախը

թերահավատության նշան է»։ Հայոց բանակին ոգևորիչ խոսքով դիմում է նաև Ղևոնդ երեցը.«…Եղբայրնե՛ր, չթուլանանք ուչվհատվենք, այլ պինդ սրտով ու հաստատուն հավատով հոժարակամ հարձակվենք այն թշնամիների դեմ, որ վեր են կացել մեզ վրա……Եթե մեռնենք, կապրենք, և եթե մեռցնենք՝ միևնույն կյանքն է կանգնում մեր առաջ»։ 451-ի մայիսի 26-ի հերոսական ճակատամարտում նահատակվում են Վարդանն ու Վարդանանք, իսկ Վասակը մարտը դիտում էր պարսից բանակում թաքնված։ Ավարայրից հետո նա այլևս պետք չէ Հազկերտին, և նրան սատակում են«ինչպես շուն և քարշ տալիս ինչպես էշ, և նրա գերեզմանի տեղն էլ չգտնվեց»։ Եղիշեն նզովում է Վասակին, անեծքի դատապարտում նաև գալիք սերունդների կողմից, իսկ Վարդանն ու Ղևոնդ երեցը սրբացվում են՝ դառնալով գալիք ժամանակների հերոսներ։ Եղիշեն իր մատյանի վերջում ողբում է Ավարայրի նահատակներին, սակայն դա ողբ չէ սովորական առումով. այն հերոսական սխրանքի փառաբանություն է՝ վասն հավատոյ եւ վասն հայրենեաց, այն սթափության ու հերուսության կոչ է, հայրենասիրության ու ազգասիրության մի հրաշալի սգերգ- օրհներգ։ Չէ՞ որ Վարդանը հայոց կաթողիկոսների թոռն էր, նա սնվել էր քրիստոնեական պատվիրաններով, իսկ Վասակը մարզպան էր կարգվել Հազկերտի կողմից՝ սպանելով իր եղբայր Վաղինակին, նա պարտավոր էր կատարել Հազկերտի հրամանը՝ ակնկալելով հայոց գահը։ Բայց դաժան են պատմության դասերը, և դավաճանները միշտ էլ պատժվում են անդառնալիորեն։

3. **Մեծ բեզարածի ու մեծ ըղձավորի** աշխարհը յուրաքանչյուրիս համար կախարդական մի այգի է, ուր մտնում ենք խորին ակնածանքով ու անվերապահ հիացումով, մի աշխարհ, որտեղ թագավորում են այրումն ու ինքնայրումը, անմնացորդ նվիրումն ու անսահման տառապանքը։ Սայաթ- Նովան միջնադարի վերջին երգրչն է, վերջին սիրերգակը, որ, իր անուրանալի հանճարի ուժգնությամբ երգելով սերը, մերժում էր անհավասարություն ու անարդարությունը։ Ֆրիկից հետո նա առաջինն էր, որ համարձակորեն իրեն անվանում էր «խալխի նոքար», և, տեսնելով իր ժողովրդի կեղեքումն ու ստորացումը, սթափության ու արդարության կոչ էր անում Հերակլ Երկրորդին.«Արթար դատե, չէ՞ վուր թաքավուր իս դուն, էս աշխարում տեր ու զորավուր իս դուն», միաժամանակ հիշեցնում էր, որ «Աստուձ դիփունանց մին հոգի էրիտ», սակայն ոտնահարված են մարդու իրավունքները, իշխողները հարստանում են անազնիվ ճանապարհով, իսկ աղքատներին բաժին է հասնում անարգանքն ու արհամարհանքը.«Ում հաքին հին շալ ին տեսնում, էլ չին ասում, թե էս ո՞վ ա»։ Արքունիքում ապրող ու իր երգով բոլորին ուրախացնող աշուղ-բանաստեղծին անընդհատ հիշեցնում են իր ծագումը, նրան հեռու են պահում ու արհամարհում, այդ պատճառով էլ նա արդարության ուղերձով է դիմում իր բարերարին՝ Հերակլին՝ նկարագրելով իր ծանր վիճակը՝

Մեկն ինձ կոսե՝«Գընա՛, մաշված շուր իս դուն», Մեկն էլ կոսե՝«Մե հոտած ջըրհուր իս դուն» կամ՝ «Մե անպատիվ հյուր իս դուն»,«Գընա, էրեսըտ սիվ մուր իս դուն»։ Բայց մեծ մարդասերը դեռ հավատում է, որ իր«հոքևուր մինձ ծընուղքըն» արդար պիտի

դատի, պիտի հասկանա իր հպատակների ցավերը և ամոքի, քանի որ ինքը՝ մեծ Բեզարածը,«հալբաթ դարդ ու ցավի մե ախպուր է», որ արդեն « բեզարել» էաղաներից ու տերերից, ստից ու զրպարտությունից, հոգնել է «խալխի գափից»՝ ամբոխի ծաղրից և արժանապատվորեն խնդրում – պահանջում է Հերակլ Երկրորդից լինել շրջահայաց, քանի «քսանն մե ղուլ չին պահում», իսկ իր նմաններին խրատել է «համով ղուլուղ անել», որպեսզի «չխփին քար»։ Մեծ բանաստեղծը կանգնում է հին շալավորների կողքին, նրանց չարքաշ աշխատանքի արդար գնահատականն է պահանջում, քննադատում է այն տեր- աղաներին , ովքեր ծաղրում են արդար վաստակի կրողներին, և Սայաթ- Նովայի «քաղցր լեզուն » դառնում է կծու, ծաղրող, սակայն երբեք չի անիծում.«Ով քիզի լիղի պարքիվե, դուն տուր շաքար, Սայաթ- Նովա»։ Նա տեսնում է, որ ոտնահարված են Աստծու պատվիրանները, և խորհուրդ է տալիս «Կարդալ Հարանց վարքըն սիրուն», որպեսզի արժանանան իրենց հպատակների օրհնանքին։ Սոցիալական անհավասարության գաղափարը առկա է մեծ մարդասերի գրեթե(անգամ սիրային) տաղերում, բայց լավագույնս արտահայտված են «Քամանչա», «Արի համով ղուլուղ արա», «Աշխարս մե փանջարա է»,«Դու էն գլխեն իմաստուն իս»,«Արթար դատե» խաղերում։ «Հարուր ցավ ու դաղ» տեսած, այլևս այդ ամենից հոգնած բանաստեղծից երբեք չենք հոգնում մենք, քանզի« Չի մեռնի այբ ժողովուրդը, որ քեզ նման սիրել գիտի». նա հրաժարվեց փառքից ու հարստությունից, արքունիքում չզբաղեցրեց արդարորեն իրեն բաժին հասած տեղից ու դիրքից, չօգտվեց իր բարերարի հովանավորչությունից, որովհետև արդար էր ու ազնիվ, չէր կարող թաքցնել ճակատագևով իրեն տրված մեծ սերը, որ մերժված էր իր դասի համար, չէր կարող տեսնել «խալխի» տառապանքը և լռել. նրա կոչումն էր Մարդ լինել։ «Այնպիսի բանանաստեղծով, ինչպիսին Սայաթ-Նովան է, պետք է պարծենա բովանդակ մարդկությունը. նրանք երկնքի վեհ ընծաներն են, որ ուղարկվում են ոչ ամենքին և ոչ հաճախակի. նրանք նախախնամության ընտրյալներն են, որոնք օրհնանք են դրոշմում իրենց դարին և իրենց հայրենիքին»։ Վալերի Բրյուսով։

Այսպիսինն **է Մեծ Բեզարածը, Մեծ Ղձավորը, Խալխի նոքարը, անկրկնելի սիրահարը, երգի որսորդը, անզուգական երգիչը։**

**«Սայաթ- Նովան մեր նոր բանաստեղծության արքայական սկիզբն է»։ Պարույր Սևակ**

**4.** Մեռա՛վ, խանդավառ սերերն երգելեն՝
Ու պիտի հավետ միտքերն հրմային
Իր թունդ քընարեն, ու երգերն ալ հին
Պաշտումով ըզմեզ միշտ պիտի գերեն։
Հույզով մեռա՛վ ան, հուշքով՝ կապրի դեռ,
Ծառերուն նըման, որ թարմ ու դալար,
Իր գերեզմանին կ՛ելլեն հովն ի վեր։
Հիացքներ կ՛երթան իրեն ետրեն..

Այսօր էլ հիացքներով են լցվում մեր հոգիները, երբ երկյուղածորեն մոտենում ենք այն աշխարհին, որ կոչվում է իր իսկ անունով՝ դուրյանական։ Դուրյանը ապրեց

ընդամենը քսանամյակ, բայց մեր գրականությանը տվեց քսան հավերժություն՝ բացելով սիրո բոլորովին նոր աշխարհ՝«Բույլ մը նայվածքի, փունջ մը ժպիտի»,,Եթեր մը տրոփի, եդեմ մը շնչի«,«Գիշեր մը սուգի, անդունդ մը հառաչի»,«Դժոխք մը անեծքի» և դարձյալ «եդեմ մը շնչի»: **Սկյուտարի սոխակն** ապրեց տառապագին կյանքով՝ աղքատ, ձրիավարժ աշակերտ, թատրոնում՝ստատիստի դերակատար ու վերձապես… անբուժելի հիվանդությամբ՝«երկնքի հիվանդությամբ»: Դուրյանի սիրո աշխարհը բոլորովին այլ լույսի տակ է ներկայացնում Սերը՝ միակ գերագույնը,որը մեզ մղում է ապրելու, տենչալու, ներելու: «Աստված մարդկային վեհ սրտերին» տվել է «գեղն ու բարին սիրելու զգացում»: Բնության գրկում ծաղկում է սերը, երբ պատնվում է սիրո հեքիաթը: «Ներա հետ» բանաստեղծությունը սիրո վայելքի մի «ոսկեզօծ ժամ է», երբ ամեն ինչ սուզվում է երջանկության վայելքի մեջ.

Մեր համբույրներն պահեցին
Տերևները խարշափմամբ,
Եվ շողերու տրվին շուք
Աստղերն երկնից այն անամպ……
Բնությունն եղավ պսակիչ,
Մեզ պսակեց աստղերով»:

Սիրո և բնության միաձուլումը և սիրո հաստատումը միայն բնության մեջ է տեսնում սիրահար պատանին, քանի որ հայտնի պատմություն է նրա սիրած դերասանուհու և ընկերուհիների զրույցը, որի ակամա ունկնդիրն է դառնում վարդի գոյությունը սիրած աղջկանով իմաստավորող բանաստեղծը.

«Վարդը գարնայնի Թե կուսին տիպար Այտերուն չըլլար,
Ո՞վ հարգեր զանի: Թե չը նըմաներ Կապույտն եթերաց Կույսին աչերաց,
Երկինք ո՞վ նայեր:»

«Սիրել» բանաստեղծությունը գեղարվեստական կատարելություն է, մի հրաշալի պատկեր, որտեղ Բույլ մը նայվածքը ծնունդ է տալիս Քուրա մը խոսքին, , և սիրահարը տրվում է Փունջ մը ժպիտով կախարդող հոգյակի հմայքին: Բանաստեղծն ուզում է գրկել, շոյել ծալ-ծալ վարսերը, շնչել նրա բուրմունքը, բայց… ծնվում է «Դրժելը», որը հակասում է բնության սիրո օրենքին.«Զիս կը նեղե՛ս», «Սիրել չես կրնար զիս», և մոխրանում են բանաստեղծի երազները, նա վերադառնում է դաժան իրականություն, որտեղ նրան չի ծաղրում միայն«միայն լուռ փոսը գերեզմանի»: Այս երկու բանաստեղծությունները պետք է նկատել միասնության մեջ թե բովանդակության, թե ձևի առումով: Եվ Դուրյանը մեզ տանում է իր հոգեաշխարհը՝հավաստելով, որ«հատակն են իմ փրփուրներ»: Իսկ մենք այդ անհատակ հատակում որոնենք դուրյանական սիրո հրդեհը և այրվենք, ինչպես այրվեց, բայց չմոխրացավ «մեր քնարերգության Վահագնը», ինչպես նրան անվանել է մեծն Սևակը:

Հայ գրականության օլիմպիադայի
հանրապետական փուլի հարցաշարերի
պատասխանների գնահատման չափանիշներ
X դասարան

1. հարց՝ Ենթահարցեր՝ 1 – 0,5 մ., 2 – 3,5 մ., 3 – 0,5 մ., 4 – 0,5 մ.
2. հարց՝ Ենթահարցեր՝ 1 – 0,5 մ., 2 – 1,5 մ., 3 – 0,5 մ., 4 – 1,5 մ., 5 – 1 մ.
3. հարց՝ Ենթահարցեր՝ 1 - 1 մ., 2 – 3 մ., 3 – 0,5 մ. , 4 – 0,5 մ.
4. հարց՝ Ենթահարցեր՝ 1 - 1 մ., 2 – 3 մ., 3 – 0,5 մ. , 4 – 0,5 մ.

**Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան**